

Գագիկ Գ. Դանիելյան

ՄԱՄԼՈՒՔՅԱՆ ՍՈՒԼԹԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԻԼԻԿՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԱԿՈՒՆՔՆԵՐԸ

Արաբական աղբյուրների քննություն*

Բանալի բառեր – Մամլուքյան սուլթանություն, մոնղոլներ, Իլ-խանություն, Կիլիկիո հայոց թագավորություն, Քիթբուղա, Հեթում Ա, Բոհեմունդ Զ, Կուտուզ, ալ-Ջահիր Բայբարս, հայ-մամլուքյան հարաբերություններ:

«Նա («Սսի իշխողը») արքաների սերունդների շատ հին արքա է, ով հավաստիացնում է, թե ինքը սերում է կոստանդինյան տնից (դինաստիայից՝ al-bayt al-Qustanīnī): Նրանց արքաներին թաքֆուր (takfūr) անունով են կոչել, որ նրանց է վերագրվել, ինչ նրանք կան ընդհուպ մինչ օրս: Ես իմ տեսակետն ունեմ կոստանդինյան տնից լինելու նրանց պնդման առնչությամբ: Եթե այս տանը պատկանողները հոռոմական ծագման (şahbat al-rūm) լինեին, ապա նրանք մելքիսյան (malkāniyya) դավանանք կունենային: Մինչդեռ թաքֆուրի տունը հայկական է, իսկ նրանց դավանանքը «հակոբիկյան» (yaʿqūbiya) կամ դրան մոտ մի դավանանք է. ընդամին երկու դավանանքների միջև մեծ հեռավորություն և [ակնհայտ] տարբերություններ կան: Ամենն, ինչ գիտենք այս տան մասին, այն է, որ նրանց մեծ պապը հնում՝ առաջին արքաների վաղեմի ժամանակներում, այս երկրների քրիստոնյաների (naşāra > naşrānī, այն է՝ «նազարեթցի») առաջնորդն է եղել: [Այս] քրիստոնյաները կավաշեն տների մարդիկ են (ahl al-madara, հավանաբար հակադրում է բեդվին վրանաբնականերին), և նրանց զանազան զբաղմունքներից են հյուսնի (nağğār), «ձեռագործ վարպետի» և հողագործի (akara) արհեստները»¹:

ալ-Ումարի (մահ. 1349թ.)

է (ԺԳ) քարի, թիվ 1 (49) հունվար-մայր, 2015
վե՛ր համահայկական համաժե՛ն

*Հոդվածն ընդունվել է տպագրության 7.02.2015:

1 Al-'Umārī, Kitāb al-Ta'rif bi-muṣṭalah al-šarīf, Maṭba'at al-'Ašima, al-Qāhira, 1894, §. 55: Հմմտ. al-Qalqašandī, Ṣubḥ al-Ašā, §. 8, al-Maṭba'a al-Amīriyya, al-Qāhira, 1915, §. 30: Takfūr տիտղոսը ծագում է հայերեն «թագավոր» բառից: Այն միջազգային դիվանագիտական հարաբերությունների բառապաշար է թափանցել Կիլիկիայի հայոց թագավորության հռչակումից հետո՝ վերագրվելով ոչ միայն հայոց արքաներին, այլ երբեմն նաև Բյուզանդիայի և Տրապիզոնի կայսրերին, ինչպես նաև տարածաշրջանի այլ քրիստոնյա տիրակալներին:

Մուտք

13-րդ դարի 40-50-ական թվականները բախտորոշ ժամանակաշրջան էին Կիլիկյան Հայաստանի պատմության մեջ: Մոնղոլների կողմից այսրկովկասյան և փոքրասիական տարածքների հպատակեցումից հետո նոր նվաճողների ներխուժման վտանգը վերահաս սպառնալիք դարձավ նաև Հայոց թագավորության համար: Ստեղծված իրավիճակում Կիլիկյան Հայաստանը նպատակահարմար գտավ իր հպատակությունը հայտնել մոնղոլներին: Այս ընթացքում Եգիպտոսում տապալվեց Այյուբյանների դինաստիան, և երկրում իշխանության դեկն իրենց ձեռքը վերցրին Մամլուքները: Իսկ Իրանի վերջնական նվաճումից հետո պատմական թատերաբեմ ելավ մեկ այլ պետական կազմավորում՝ մոնղոլական Իլ-խանությունը: Այս երկու հզոր տերությունների՝ Իլ-խանության և Մամլուքյան սուլթանության ռազմաքաղաքական հակամարտության շրջանակներում ակնհայտ դարձան Հայոց թագավորության որդեգրած արտաքին քաղաքական ուղեգծի առանձնահատկությունները:

1. Քաղաքական հեղաշրջում Եգիպտոսում

13-րդ դարի կեսերին Եգիպտոսում տեղի ունեցան իրադարձություններ, որոնք արմատապես փոխեցին քաղաքական կացությունը ոչ միայն այդ երկրում, այլև ողջ Մերձավոր Արևելքում: Վաղուց արդեն այյուբյան բանակի բաղկացուցիչ տարր դարձած և Սալահ ալ-Դինի հիմնադրած հարստության վերջին ազդեցիկ տիրակալի՝ ալ-Սալիհ Նաջմ ալ-Դին Այյուբի (կառ. 1240-1249 թթ.) օրոք գերակշռության հասած և մեծ արտոնություններ ստացած մեծ մասամբ՝ **թյուրք-դփչաղյան** ծագում ունեցող մամլուքները (արաբ.՝ mamlūk < mamālīk, այն է՝ «ստրուկ»)՝² նրա մահից հետո երկիրը դեկավարելու հայտ ներկայացրին և բարեպատեհ հանգամանքների բերումով իրենց ազդեցիկ խմբավորումներից մեկի՝ «Բահրիների» (al-Bahriyya կամ al-Bahriyya al-Şālihiyya) գլխավորությամբ կարճ ժամանակում հայտնվեցին պետության կառավարող վերնախավում³:

Ավելորդ չէ նշել ֆրանկների նկատմամբ ալ-Մանսուրայի (al-Manṣūra) ձևավորման արտում տարած հաղթանակում և առիասարակ խաչակրաց 7-րդ արշավանքին դիմագրավելու գործում հենց Բահրիների ունեցած վճռական դերակատարության մասին⁴: Խաչակիրների հետ պատերազմի բռնում (1249 թ.), սուլթան ալ-Սալիհի մահվան փաստը մի քանի ամիս շարունակ գաղտնի պահելով՝ երկրի փաստական կառավարումը ստանձնեց նրա այրին՝ Շաջար (կամ Շաջարաթ) ալ-Դուրրը⁵՝ սպասելով ալ-Սալիհի որդու՝ Մուազզամ Թուրան-շահի ժամանմանը

2 **Ayalon D.**, Aspects of the Mamlūk phenomenon (Part I-II) // Der Islam, 53/54, 1976/1977, pp. 196-225, pp. 1-32: Մինչև Մամլուքյան սուլթանության հիմնադրումը մուսուլմանական իրականության մեջ մամլուք ռազմիկների օգտագործման երևույթի էլ ավելի հանգամանալից ուսումնասիրությունը տես **Aḥmad Muḥtār al-ʿAbādī**, Qiyām dawlat al-mamālīk al-ūlā fi Miṣr wa al-Şām, Dār al-Nahḍa al-arabiyya, Bayrūt, 1986, շ. 11-113.

3 **Իբն ալ-Գավաղարիի** (մահ. 1335 թ. հետո) վկայությամբ՝ «[Սուլթանն] այնքան թուրք մամլուքներ գնեց, որ նրանից առաջ ոչ մի արքա նրա չափ չէր գնել, մինչև որ գործի մեծամասնությունը իր մամլուքները դարձան»: Տես **ibn al-Dawādārī**, Kanz al-durar wa ḡāmi al-ḡurar, ց. 7, bi-taḥqīq Saʿīd Abd al-Fattāḥ Ašūr, al-Qāhira, 1972, շ. 370: Ալ-Սալիհ Այյուբի «մամլուքյան» քաղաքականության մասին տես **Levanoni A.**, The Mamluks' Ascent to Power in Egypt, Studia Islamica, № 72, 1990, pp. 121-144: Այս մամլուքները «բահրի» կոչվեցին, քանի որ սուլթանը նրանց զորանոցները տեղակայել էր Նեղոսի (baḥr al-Nīl) կղզիներից մեկում (al-Rawḍa): Տես **al-Maqrīzī**, Kitāb al-sulūk li-mārifat duwal al-mulūk, ց. 1.2, bi-taḥqīq Muḥammad Muṣṭafā Ziyāda, Maṭbaʿat al-talīf wa al-tarḡama wa al-naṣr, al-Qāhira, 1957, շ. 340.

4 **Al-ʿAbādī**, Qiyām, շ. 110.

5 Ըստ մամլուք որոշ պատմիչների՝ նա ազգությամբ հայ կամ թուրք ստրկուհի էր, ում ալ-Սալիհը ազատություն էր շնորհել ու կնության առել: Տես, օրինակ, **Abū al-Fidā**, Kitāb al-Muḥtaṣar fi aḥbār al-baṣār, ց. 3, al-Maṭbaʿa al-Ḥusayniyya al-Miṣriyya, al-Qāhira, 1907, շ. 192; **al-Umārī**, Masālik al-abṣār fi mamālīk al-amṣār, ց. 27, bi-taḥqīq Maḥdī al-Naḡm, Dār al-kutub al-ilmīyya, Bayrūt, 2005, շ. 241; **al-Maqrīzī**,

Կահիրե: 1250 թ. գահ բարձրացած Թուրան-շահը հուսահատ փորձ արեց իշխանության օղակներից դուրս մղելու իր հոր մամլուքներին, բայց շուտով ինքը սպանվեց՝ դառնալով նրանց խարդավանքների զոհը:

Արդի արաբ պատմաբան Սաիդ Աշուրի բնութագրումը՝ «Թուրան-շահի մահից հետո մամլուքները առաջին և վերջին խոսքի տերը դարձան երկրի գործերում»⁶: Նրա փոխարեն սուլթանական գահին նստեց Շաջար ալ-Դուրրը (umm/wālidat Ḥalīl) և հռչակվեց «մուսուլմանների թագուհի» (malikat al-muslimīn)⁷ ու անգամ իր անունով դրամ հատեց⁸: Բայց կնոջ միահեծան իշխանության գահափարը խորթ էր մուսուլմանական քաղաքական ավանդույթին ու կրոնական գաղափարախոսությանը, ուստի տրտունջներ հարուցեց իսլամական աշխարհում⁹: Այս իրավիճակում մի քանի ամիս կառավարելուց հետո Շաջար ալ-Դուրրն անունացավ մամլուք էմիրներից մեկի՝ Իզզ ալ-Դին Այբաքի հետ, ով կարճ ժամանակ անց սուլթան հռչակվեց al-Malik al-Mu'izz (կառ. 1250-1257 թթ.) գահակալական անվամբ¹⁰: Ահա այս անցքերով նշանավորվեց մամլուքյան իշխանության սկիզբը Եգիպտոսում: Եվ չնայած մամլուքներից ևս տասը տարի պահանջվեց իրենց իշխանությունը հաստատուն հիմքերի վրա դնելու համար, այնուհանդերձ Եգիպտոսի մամլուքյան սուլթանության ծննդյան թվական է ընդունված 1250-ը: Այս դեպքերից մոտ 130 տարի անց չերքեզական ծագման մամլուքյան մեկ այլ խմբավորման առաջնորդ Սայֆ ալ-Դին Բարկուկը (կառ. 1382-1389, 1390-1399 թթ.), զավթելով իշխանությունը, հիմնադրեց «Բուրջի» հորջորջված հարստությունը (1382-1517 թթ.)¹¹:

al-Sulūk, ց. 1.2, ց. 361-362: Շաջար ալ-Դուրրի մասին մանրամասն տե՛ս Schregle G., Die Sultanin von Ägypten, Sağarat ad-Durr, Otto Harrassowitz, Wiesbaden, 1961; **Levanoni A.**, Sağār ad-Durr: A Case of female sultanate in Medieval Islam // Egypt and Syria in the Fatimid, Ayyubid and Mamluk eras, vol. III, ed. by U. Vermeulen and J. Van Steenbergen, Uitgeverij Peeters, Leuven, 2001, pp. 209-218.

6 **Sa'īd 'Abd al-Fattāḥ 'Aṣūr.** Aṣr al-Mamālīk fī Miṣr wa Ṣām, Dār al-Nahḍa al-arabiyya, al-Qāhira, 1976, ց. 11.

7 **Al-Maqrīzī,** Kitāb al-sulūk, ց. 1.2, ց. 361.

8 Տե՛ս Անդ., ց. 362, ինչպես նաև **Abū al-Fidā'**, Kitāb al-Muḥtaṣar, ց. 3, ց. 143.

9 Ըստ **ալ-Մակրիզիի** (մահ. 1442թ.) և մի քանի այլ պատմիչների՝ իր դժգոհությունը հայտնեց նաև Աբբասյան խալիֆա ալ-Մուսթասիմը, ով հեզնական նամակ հղեց Կահիրե՝ ասելով. «Եթե ձեզ մոտ վերջացել են տղամարդիկ, հայտնե՛ք մեզ, և մենք ձեզ կուղարկենք մեկին» Տե՛ս **al-Maqrīzī,** al-Sulūk, ց. 1.2, ց. 368:

10 Ռ. Իրվինի հանդամբ Այբաքը չի պատկանել Բահրի խմբավորմանը, ավելին՝ գահ է բարձրացվել արքունիքի ոչ մամլուքյան տարրերի կողմից՝ նրանց իշխանության օղակներից հեռացնելու համար: Այբաքը, սակայն, անկարող է եղել դիմադրել Բահրիների ճնշմանը՝ հարկադրվելով իշխանությունը երկու տարի (1252-1254 թթ.) կիսել նրանց դրածո Այյուբյան արքայազն, ալ-Մալիք ալ-Բամիլի թոռ ալ-Աշրաֆ Մուսայի հետ որպես վերջինիս աթաբեկ և սուլթանական բանակի հրամանատար: Տե՛ս **Irwin R.**, The Middle East in the Middle Ages: The Early Mamluk sultanate 1250-1382, Southern Illinois University Press, Carbondale and Edwardsville, 1986, pp. 26-27.

11 Տե՛ս **Ayalon D.**, The Circassians in the Mamlūk kingdom // Journal of the American Oriental Society, vol. 69.3, 1949, pp. 137-138: 1250-1517 թթ. Եգիպտոսում իշխանության դեկին եղած քաղաքական այս երկու խմբավորումների էթնիկական և լեզվական ծագումը հաշվի առնելով՝ միջնադարի արաբագիր պատմիչներն իրենց երկերում նրանց սուլթանությունը և կառավարող դինաստիան առավել հաճախ կոչում են համապատասխանաբար dawlat al-atrāk կամ al-dawla al-turkiyya, այն է՝ «թուրքերի պետություն» և dawlat al-jarākisa, այն է՝ «չերքեզների պետություն»: Հետևապես «Բահրիների սուլթանություն» և «Բուրջիների սուլթանություն» անվանումներն այստեղ լրիվ պայմանականորեն են կիրառված: Երկու եզրերի օգտագործման անպատակահարմարության հարցին անդրադարձել է Դ. Այալոնը: Տե՛ս **նույնի՝** Bahrī Mamlūks, Burjī Mamlūks: inadequate names for the two reigns of the Mamluk sultanate, Tārīḥ 1, 1990, pp. 3-53 և al-Bahriyya // Encyclopaedia of Islam (New Edition, հետադարձ՝ EI2), vol. 1 (A-B), E. J. Brill, Leiden, 1986, pp. 944-945: Հմմտ. **Yosef K.**, Dawlat al-atrāk or dawlat al-mamālīk? Ethnic origin or slave origin as the defining characteristic of the ruling élite in the Mamlūk sultanate // Jerusalem Studies in Arabic and Islam, vol. 39, 2012, pp. 387-410.

2. Կիլիկյան Հայաստանը արտաքին–քաղաքական կողմնորոշման երկրնտրանքի առջև

13-րդ դարի կեսերը շրջադարձային էին նաև Կիլիկիայի Հայոց թագավորության համար: Դա հիմնականում կապված էր դեպի Առաջավոր Ասիա և Մերձավոր Արևելք մոնղոլների հաղթական շարժի արդյունքում ձևավորված նոր աշխարհաքաղաքական իրադրության հետ: Հեթում արքայի (կառ. 1229-1269 թթ.) դիվանագիտական հեռատեսությունը թույլ տվեց խուսափել նոր նվաճողների հետ բախումից և երկիրը գերծ պահել նրանց ավերիչ ներխուժումից: Հատկանշական է, որ մինչև մոնղոլների հայտնվելը Հայոց թագավորությունը գտնվում էր Ռումի կամ Իկոնիայի սելջուկյան սուլթանության ենթակայության ներքո¹²: Սակայն երբ 1243 թ. Քյոսեդաղի (Չմանկատուկի) ձակատամարտում կրած ծանր պարտությունից հետո մոնղոլներին հնազանդվեցին նաև Ռումի սելջուկները, վտանգը շատ մոտ և հետևաբար՝ դիվանագիտական նոր հայեցակարգի որդեգրումը օրապահանջ դարձավ նաև Կիլիկյան Հայաստանի համար: Ստեղծված քաղաքական պայմաններում երկրի ռազմավարչական վերնախավը, հանձին Հեթում թագավորի, որոշում կայացրեց. մոնղոլների գերակայությունն ընդունելով՝ հաշտության եզրեր փնտրել նրանց հետ: Մամլուքյան մատենագիր **ալ-Ռումարին** այդ մասին այս կերպ է գրում՝ չկարողանալով թաքցնել հայերի նկատմամբ տածած անհանդուրժողական վերաբերմունքը. «Եվ վերջապես նրանց (հայերի) հպատակությունը Ռումի սելջուկյան արքաների մնացած մասի նկատմամբ էր (li-baqiyyat al-mulūk al-salāḡiqa bi-al-Rūm), և նրանց վրա [գլխա]հարկ ու [բոլորի] հայտնի հնազանդություն կար սահմանված, և սելջուկյան արքայի կողմից երկրի վրա գործակատար-վերակացուներ (al-‘ummāl wa al-šihānī ‘alā al-bilād) կային կարգված, մինչև որ թուլացավ այդ [սելջուկյան] պետությունը...ինչին տեսչում էր այդ անիծյալը (Հայոց արքան), և նրա թոչնակը արծվի վերածվեց, ու հաճախացան նրա երդմնագրանցությունները... և նա գրավեց այս երկրներն ու տիրեց դրանց և [աստիճանաբար] նվազեցնելով սելջուկների ժառանգությունը՝ [վերջնականապես] յուրացրեց այն»¹³: Իսկ Ֆրանսիացի պատմիչ Ժան դը Ժուանսիլի (մահ. 1317 թ.) մոտ կարդում ենք. «Հայոց թագավորը Իկոնիայի սուլթանից ունեցած կախվածությունից ազատվելու համար ուղևորվեց թաթարների արքայի մոտ և

12 Նման ենթադրության հիմք է տալիս առկա դրամագիտական նյութը, քանզի հայտնի է, որ Ալա ալ-Դին Քայկուբադ (կառ. 1220-1237 թթ.) և Դիյաս ալ-Դին Քայխոսով (կառ. 1237-1246 թթ.) սուլթանների օրոք հատվել են հայ-սելջուկյան երկլեզվյան դրամներ, որոնց մի երեսին դրոշմված է «Հեթում թագաւոր հայոց», իսկ դրածերեսին հիշյալ սուլթանների անունների արաբատառ մակագրություններն են: Տես **Bedoukian P. Z.**, *Coinage of Cilician Armenia*, The American Numismatic Society, New York, 1962, pp. 227-235: Միջնադարյան աղբյուրներում Իկոնիայի սուլթանությանը հայոց թագավորության հարկ վճարելու մասին վկայություններ չգտնելով՝ որոշ հետազոտողներ կարծիք են հայտնել, որ այդ դրամները հատվել են առևտրատնտեսական նպատակներով (**Սապպաղեան Պ.**, Հեթում Ա-ի Հեթում-Ջապել և երկլեզուան դրամներու մասին, «Հայկազեան հայագիտական հանդէս», հատ. Ը, Պէյրոթ, 1980, էջ 233-248), սակայն ամենատարածված տեսակետն այն է, որ Հեթումը դրանք հատել է ի նշան իր հնազանդության, որ ամենայն հավանականությամբ ձևական բնույթ էր կրում: Տես **Bedoukian**, *Coinage*, p. 84: Հմմտ. **Cahen Cl.**, *La Turquie pré-ottomane (Varia Turcica VII)*, Institut Français d'Études Anatoliennes, Istanbul, 1988, p. 88-89: Տես նաև **Nercessian Y. T.**, *Attribution and Dating of Armenian Bilingual Trams // Armenian Numismatic Society, Special Publication N° 2*, Los Angeles, 1983: Հմմտ. **Stewart A. D.**, *The Armenian Kingdom and the Mamluks: War and Diplomacy during the Reigns of He'tum I (1289-1307)*, Brill, Leiden, 2001, pp. 43-44, n. 2; **Տեր-Պետրոսյան Լ.**, Խաչակիրները և հայերը, հատ. Բ, Պատմա-քաղաքագիտական հետազոտություն (Հայկական մատենաշար Գալուստ Կիւպէնկեան հիմնարկութեան), Եր., 2007, էջ 299-301: Պետք է նշել, որ մեզ հայտնի աղբյուրներից Ռումի սուլթանությանը հայոց թագավորության հարկատու լինելու մասին ակնարկներ կան **Իբն Բիբիի** և **ալ-Ռումարիի** մոտ: Իբն Բիբիի տեղեկությանն արդեն անդրադարձ կատարվել է (տես **Տէր-Պողոսեան Հ. Պ.**, Հայաստան իբն Բիբիի համեմատ «Հանդէս ամսօրեայ», 1960, N 10-12, էջ 488-492), իսկ ալ-Ռումարիի վկայությունը տես ներքևում: 13 **Al-Umāri**, *al-Ta'rīf*, §. 55: Հմմտ. *al-Qalqašandī, Šubḥ al-Ašā*, §. 8, §. 30.

հնագանդվեց, որպեսզի նրանց աջակցությունը ստանա»¹⁴:

Մոնղոլ զորավար Բաչու-նոյինի հետ սկսած բանակցությունները արգասաբեր եղան: 1248 թ. Սմբատ Մպարապետի և 1254 թ. Հեթում արքայի՝ համապատասխանաբար Գույուկ (1246–1248 թթ.) և Մանգու (1251–1259 թթ.) խաների արքունիքներ կատարած դեսպանագնացություններով Կիլիկիո Հայոց թագավորությունը նույնպես վերջնականապես ստորակա դարձավ մոնղոլներին: Հեթումի միջնորդությամբ մոնղոլների գերակայությունն ընդունեց նաև Աստիոքի իշխան Բոհեմունը Զ-ն (1252–1275 թթ.), ով հայոց գահակալի փեսան էր՝ նրա Սիբիլ դստեր ամուսինը¹⁵: Նույն Մանգու խանի օրոք նրա եղբայր Հուլաղուն ավարտին հասցրեց Իրանի նվաճումն ու հիմնադրեց մոնղոլական Իլ-խանությունը (1256–1335 թթ.):

3. Մամլուքների իշխանության անկայուն շրջանը

Դառնալով մամլուքյան Եգիպտոսին՝ նշենք, որ Այբաքը սուլթանության ղեկին մնաց յոթ տարի՝ լի ներքաղաքական ցնցումներով և արքունական խարդավանքներով, որոնցից մեկի զոհն էլ ինքը դարձավ: Նախ 1254 թ. նա սպանեց Բահրիների առաջնորդ Ֆարիս ալ-Դին Ակտային և գահընկեց արեց նրանց դրածո սուլթան ալ-Աշրաֆ Մուսային: Բահրիների մնացած մասը Բայբարս ալ-Բունդուկտարիի գլխավորությամբ, ստիպված եղավ փախչել Եգիպտոսից և ապաստան փնտրել Ասորիքում՝ ծառայության անցնելով նախ Դամասկոսի և Հալեպի, իսկ հետո՝ Քարաքի Այյուբյան տիրակալներ ալ-Նասիր Յուսուֆի և ալ-Մուլիս Ումարի մոտ: Մասնավորապես հենց Բահրիների հորդորներով վերջինս երկու ռազմարշավ ձեռնարկեց Եգիպտոսի դեմ, բայց երկու դեպքում էլ ձախողվեց¹⁶: 1257 թ. Կահիրեում քաղաքական իրավիճակը կրկին շիկացավ: Սա տեղի ունեցավ այն բանից հետո, երբ Այբաքը վճռեց կնության առնել Մոսուլի տեր Բադր ալ-Դին Լուլուի¹⁷ դստերը: Այս մասին իմանալով՝ Շաջար ալ-Դուրրը կազմակերպեց

14 Stū Memoirs of the Crusades by **Villehardoin & de Joinville**, tr. by Sir Frank Marzials, London & New York, 1908, p. 171.

15 Stū **Les gestes des Chiprois**, ed. G. Raynaud (Publications de la Société de l'Orient Latin. Série historique 5), Geneva, 1887, p. 161; **Hayton**, La Flor des estoires de la Terre d'Orient // Recueil des historiens des croisades. Documents arméniens, t. 2, p. 171.

16 **ԱՏՄ**, *Aṣr al-Mamālīk*, §. 24; **Irwin**, Middle East, p. 30; **Humphreys R. S.**, From Saladin to the Mongols: The Ayyubids of Damascus, 1193–1260, State University of New York Press, Albany, 1977, pp. 331–333.

17 Բադր ալ-Դին Լուլուն ազգությամբ հայ էր, ում որպես մամլուք ստրուկ գնել էր Մոսուլի Զանգի աթաբեկ Նուր ալ-Դին Արսլան Շահը (կառ. 1199–1211 թթ.): Բարձրանալով ռազմավարչական աստիճանակարգերով՝ նա 1211 թ. մահվան մահձում գտնվող Արսլան Շահի կողմից նշանակվել է նրա որդի ալ-Մալիք ալ-Կահիր Մասուդի խնամակալ և այդ պահից սկսած՝ դարձել Մոսուլի փաստական կառավարիչը: Ալ-Կահիրի մահից հետո նա եղել է նաև վերջինիս որդու խնամակալը: Բադր ալ-Դինը Մոսուլի լիիրավ տեր է դարձել միայն 1233 թ., երբ պաշտոնապես «իշխանության տվչություն» (ինվեստիտուրա) է ստացել Բադրադի խալիֆայից՝ որդեգրելով al-Malik al-Raḥīm գահակալական անունը: Հայոց արքա Հեթումի պես ընդունել է մոնղոլների գերակայությունը և 1246 թ. դեսպանություն ուղարկել Կարակորում: Աջակցել է Հուլաղուի ասորիքյան արշավանքներին: Թեև իսլամացած էր, այնուամենայնիվ միջնադարյան արաբական կենսագրական բառարանները նրա հայկական ծագման և դավանանքի մասին ուղարկված տեղեկություններ են տալիս: Ալ-Ջահարիի մոտ, օրինակ, կարդում ենք. «Ի շարս իր ժողովրդի մյուս ծեսերի՝ նա Ծաղկազարդի տոնն (īd šāānīn) էր տոնում: Նա չափազանց մեծ սեղան էր գցում, երգիչներ բերել տալիս և այդ ամբողջ ընթացքում գինու տակառներ [դատարկում], զվարճանում և բերդից ոսկեղրամներ նետում, իսկ [ներքևում խոնավ] մարդիկ իրար ձեռքից էին խլում դրանք: Նրան ատեցին քրիստոնեական ծեսերը նշելու համար՝ ասելով՝ նա սիրով գովաբանում էր քրիստոնեական տոները՝ պնդելով, թե Աստված Մարիամի որդի Հիսուսն է...»: Stū **al-Zahabī**, *Siyar alām al-nubalā*, §. 23, bi-tahqīq Bašār Awwād Ma'rūf, Mu'assasat al-Risāla, 1996 §. 357: Հմնտ. al-Šafadī, *Kitāb al-Wāfi bi-l-wafayāt*, §. 24, bi-tahqīq Aḥmad al-Arnā'ūt wa Turki Muṣṭafā, *Dār ihyā al-turāṭ al-arabī*, Bayrūt, 2000, §. 308: Բադր ալ-Դինի մասին տես **Sawādī 'Abd Muḥammad al-Ruwaysīdī**, *Imārat al-Mawṣil fī ahd Badr al-Dīn Luḷu*, 606–660 h./1209–1261 m., Maṭbaat al-iršād, Bagdād, 1971 և **Patton D.**, *Badr al-Dīn Luḷu*, 1211–1259, Seattle and London, 1991: Ի դեպ՝ ֆրանսիացի պատմաբան Կլոդ Կայենը սխալվում է՝ «Իսլամի հանրագիտարանում» գրելով, թե Բադր ալ-Դինը հավանաբար սևամորթ ստրուկ էր: Stū

իր ամուսնու սպանությունը, բայց չկարողանալով աջակիցներ գտնել իշխանությունն իր ձեռքում կենտրոնացնելու համար, ինքը նույնպես սպանվեց¹⁸: 1257 թ. սուլթանության գահին նստեցվեց Աբբասի տասնհինգամյա որդին՝ ալ-Մանսուր Ալին (1257-1259 թթ.), թեև պետության փաստական իշխանությունն իր ձեռքում կենտրոնացրեց աթաբեկ Կուտուզը:

1259 թ., երբ իլ-խան Հուլաղուի մոնղոլական քանակներն արդեն գրավել էին Բաղդադը¹⁹, կործանել Աբբասյան խալիֆայությունը²⁰ և պատրաստվում էին հաջորդ քայլով ներխուժել Ասորիք, Եգիպտոսում տեղի ունեցավ ևս մեկ հեղաշրջում: Գահընկեց անելով ալ-Մանսուր ալ-Ալին՝ Մայֆ ալ-Դին Կուտուզն իրեն հռչակեց սուլթան՝ al-Malik al-Muzaffar գահակալական անունով (կառ. 1259-1260 թթ.): Հաշտության եզրեր գտնվեցին նաև Ասորիքում ապաստանած Բահրինների հետ, և Բայբարսն իր զինակիցների հետ վերադարձավ Եգիպտոս:

4. Ասորիքը գրավելու մոնղոլների առաջին փորձը և Կիլիկյան Հայաստանը

Հուլաղուի ասորիքյան արշավանքի մեկնարկը տրվեց հիջրայի 658 թ. (1259/1260 թ.)²¹: Նա, մոնղոլական զորքերի, ինչպես նաև հայկական, վրացական և Ռումի սելջուկյան օգնական ուժերի գլուխ անցած, մոտեցավ Եփրատին²²:

Cahen Cl., Lu'lu' // EI2, vol. 5, p. 821.

18 Տե՛ս **Muhammad Suhayl Taqquš**, Tārīḥ al-Mamālīk fī Miṣr wa bilād al-šām, Dār al-nafā'is, Bayrūt, 1997, Տ. 51-52. 19 Ինչպես երևում է, Կիլիկիայի հայկական զորքերը չեն մասնակցել Բաղդադի գրավմանը: Փոխարենը, ինչպես հայ պատմիչներն են վկայում, մոնղոլական զորքերի կազմում Բաղդադի և Մայաֆարիկիի պաշարմանը մասնակցել են հայկական զորքեր Մեծ Հայքից: Հատկանշական է նաև, որ Մայաֆարիկիի պաշարումը գլխավորել է Հուլաղուի որդի Յոշնուտը: Տե՛ս Պատմություն Հայոց արարեալ **Կիրակոսի վարդապետի Գանձակեցույ**, ի յոս ընծայեաց Ոսկան Տէր-Գէորգեան Յովհաննիսեանց Երևանեցի, տպարան Արևելեան լեզուաց ձեռնարանի տեսրց Լազարեանց, Մոսկուա, 1858, էջ 230; Հաւարումն պատմութեան **Վարդանայ** Վարդապետի, լուսարանեալ աշխատապիրութեամբ Ղ. Ալիշանի (Մատենագրութիւնք նախնեաց: Պատմագիրք հայոց), Վենետիկ, 1862, էջ 152; Պատմութիւն նահանգին Սիսական արարեալ **Ստեփաննոսի Օրբէլեան** արք եպիսկոպոսի Սիւնեաց, ի յոս ընծայեաց հանդերձ ծանօթութեամբ Կ. Վ. Շահնազարեանց, հատ. Բ, Փարիզ, 1859, էջ 150: Հմտ. **Գրիգոր Ակներցի**, Պատմութիւն ազգին նետողաց // Պատմութիւն թաթարաց Վարդանայ պատմի հանեալ ի ձեռագիր օրինակաց թանգարանի Սրբոց Յակովբեանց, տպարան Սրբոց Յակովբեանց, Յերուսաղեմ, 1870, էջ 40-41, ինչպես նաև **Blake R. P., Frye R. N.**, History of the Nation of the Archers (The Mongols) by Grigor of Akanc // Harvard Journal of Asiatic studies, vol. 12, № 3/4, 1649, p. 334: Տե՛ս նաև **Mutafian Cl.**, L'Arménie du Levant (XIe-XIVe siècle), Les Belles Lettres, Paris, 2012, p. 145-146; **Dashdondog B.**, The Mongols and the Armenians (1220-1335), Leiden-Boston, 2011, pp. 127-135:

20 1258 թ. մոնղոլների կողմից Բաղդադի գրավումը նշանավորեց Աբբասյան խալիֆայության կործանումը: Այնուամենայնիվ, շատ չանցած (1260 թ.)՝ մամլուքյան սուլթան ալ-Ջահիր Բայբարսը (կառ. 1260-1277 թթ.) իր իշխանությանը լեգիտիմություն հաղորդելու նկատառումով Կահիրեում հանդիսավոր կերպով խալիֆա հռչակեց Աբբասյան դինաստիայի մի ներկայացուցչի՝ ալ-Մուսթանսիր անունով, իսկ վերջինս մահից հետո մեկ այլ թեկնածուի՝ ալ-Հաքիմ անունով: Սուլթանն իր այդ քայլով, փաստորեն, վերականգնեց կործանված խալիֆայությունը, որը, թեկուզև ունենալով բացառապես խորհրդանշական և ծիսական-արարողակարգային բնույթ, իր գոյությունը պահպանեց մինչև օսմանյան թուրքերի կողմից Եգիպտոսի նվաճումն ու Մամլուքյան սուլթանության կործանումը (1517 թ.): Կահիրեի Աբբասյան խալիֆայության մասին տե՛ս **Ayalon D.**, Studies on the Transfer of the Abbāsid Caliphate from Bagdād to Cairo // Arabica, vol. 7.1, 1960, pp. 41-59; **Holt P. M.**, Some Observations on the Abbāsid Caliphate of Cairo // BSOAS, vol. 47.3, 1984, pp. 501-507; **Heidemann S.**, Das Aleppiner Kalifat (A. D. 1261): Vom Ende des Kalifates in Bagdad über Aleppo zu den Resataurationen in Kairo, E. J. Brill, Leiden, 1994, ինչպես նաև վերջինիս գրախոսությունը Ռ. Ամիտայի կողմից՝ **Amitai-Preiss R.**, The Fall and Rise of the Abbāsid Caliphate // Journal of the American Oriental Society, vol. 116, № 3, pp. 487-494.

21 Ըստ Հեթում Կոռիկոսցու (Հայթոն)՝ Ասորիքի գրավման ծրագրերին իր մասնակցությունն է ունեցել Հեթում արքան, և հենց ինքն է իլ-խանին խորհուրդ տվել առաջինը Հալեպին հարվածել: Տե՛ս **Hayton**, La Flor, p. 170.

22 **Amitai-Preiss R.**, Mongols and Mamluks: The Mamluk-İlkhānid war 1260-1281, Cambridge

Հակոբիկ եկեղեցու մափրիան **Բար Հեբրեոսի** (մահ. 1286 թ.) «Ժամանակագրության» արաբական խմբագրության մեջ (al-Muḥtaṣar fi [tārīḥ] al-duwal)²³ այդ մասին կարդում ենք. «[Հիջրայի] 658 թ. Ասորիքի իլ-խան Հուլադուն՝ 400 հազարանոց զորքի ուղեկցությամբ պաշարեց Խառանն (Harrān) ու գրավեց այն «անվտանգության երաշխիքով» (amān)²⁴: Ապա նա առաջ ընթացավ և Եփրատի վրա՝ Մալաթիա քաղաքի մոտ, կամուրջ անցկացնել տվեց, մեկ ուրիշը՝ Հռոմկլայի մոտ, մյուսը՝ Կարկիսիայի (Օսրոյենե), որոնց վրայով է, որ բանակներն անցան [գետն] ու մեծ սպանդ կազմակերպեցին Մանրիջում»²⁵: Այս հաղորդումը կա նաև հեղինակի ասորերեն «Ժամանակագրության» մեջ, միայն թե նրանում հիշյալ բնակավայրերից բացի գետանց կամրջի անցկացման վայր է նշված նաև ալ-Բիրան²⁶: Մոնղոլական ներխուժման ականատես, բաղադրի քրիստոնյա պատմիչ **Իբն ալ-Ֆուվատիին** (մահ. 1323 թ.) վերագրվող al-Ḥawādīṭ al-ḡāmi'a երկը հաստատում է ասորի մատենագրի վկայությունը. «Հետո սուլթանը (նկատի ունի Հուլադունին) հրաման արձակեց երեք կամուրջ անցկացնել Եփրատի վրայով. մեկը՝ Մալաթիայի մոտ, մյուսը՝ ալ-Բիրայի, մեկ ուրիշը՝ Հռոմկլայի, և իր անհաշվելի բանակով ուղղություն բռնեց դեպի ալ-Ջազիրա և գրավեց այն անվտանգության երաշխիքով (amān)»²⁷: Ավելի ուշ շրջանի արաբագիր պատմիչներից գետանց կամուրջների շինարարության մասին խոսում է նաև **Իբն Բասիրը** (մահ. 1373 թ.), թեև չի նշում, թե դրանք հատկապես որ բնակավայրերի մոտ են կառուցվել²⁸: Ուշագրավ է, որ հայկական մի քանի աղբյուրների հավաստմամբ հայոց Կոստանդին կաթողիկոսը հանդիպել է Հուլադունին և օրինել նրան: Վարդան Արևելցին, օրինակ, գրում է, «Յեօթն հարիւր և ութ թուին չոգաւ Հուլաուն յաշխարհն Միջագետաց...: Եկն առ նա պատրիարքն Հայոց, կաթողիկոսն, օրինեաց զնա և սիրեցաւ ՚ի նմանէ»²⁹:

Երևում է՝ Հռոմկլայի մատույցներում Եփրատն անցնող մոնղոլական բանակը մեծ տպավորություն է թողել հռոմկլայեցիների վրա: Դրա մասին են վկայում 1260 թ. Հռոմկլայում Թորոս Ռոսլիկի վրձնով ծաղկված մի Ավետարանում մոզերի երկրպագության տեսարանում մի քանի մոնղոլների պատկերները և կողքին

University Press, Cambridge, 1995, p. 26: **Իբն Վասիլի** մոտ կարդում ենք. «Այս տարվա սկզբին Հուլադուն՝ թաթարների արքան, կտրեց-անցավ Եփրատը անհամբուխ զորախմբով՝ կազմված թաթարներից, պարսիկներից, վրացիներից և այլ ժողովուրդներից»: Sīn u ibn Wāsil, Mufarrīḡ al-kurūb fi aḥbār banī Ayyūb, ǧ. 6 (Mohamed Rahim, Die Chronik des ibn Wāsil: Kritische Edition des letzten Teils (646/1248-659/1261) mit kommentar, Harrassowitz Verlag, Wiesbaden, 2010), p. 10: «Այլ ժողովուրդներ» ասվածի տակ մատենագիրը թերևս նկատի է ունեցել նաև հայերին:

23 Այս երկրորդը, սակայն, պարզապես թարգմանություն չէ, այլ լրիվ ինքնուրույն աշխատություն, քանի որ ներառում է լրամշակված հատվածներ ու տեղեկություններ, որոնք տեղ չեն գտել ասորերեն բնագրում: Տե՛ս **Segal J. B.**, ibn al-İbrī // EI2, vol. 3 (H-IRAM), 1986, p. 805: Հմմտ. **Lawrence I. C.**, On the Arabic chronicle of Bar Hebraeus. His aims and audience, Parole de l'Orient: revue semestrielle des études syriaques et arabes chrétiennes: recherches orientales: revue d'études et de recherches sur les églises de langue syriaque, XIX, 1994, pp. 319-378.

24 Amān-ը անվտանգության, հաշտության, խաղաղության, հովանավորության խոստումն է կամ երաշխիքը հնազանդության դիմաց: Ինստիտուտի մասին տե՛ս **Schacht J.**, Amān // EI2, vol. 1, pp. 429-430, ինչպես նաև **Wansbrough J.**, The Safe-Conduct in Muslim Chancery Practice // Bulletin of the School of Oriental and African Studies, vol. 34, № 1 (1971), pp. 20-35.

25 **Ibn al-İbrī**, Tārīḥ muḥtaṣar al-duwal, al-ṭaba al-ṭāniya, bi-taḥqīq Anṭūn Ṣāliḥānī al-Yasūī, Dār al-Rāid al-Lubnānī, Bayrūt, 1994, s. 279.

26 Տե՛ս The Chronography of Gregory Abū'l-Faraj, The son of Aaron, The Hebrew Physician, The first part of his Political History of the World, vol. I, trans. Ernest A. Wallis Budge, Oxford University Press, London, 1932, reprinted by Gorgias Press, 2003, p. 435.

27 **Ibn al-Fuwaṭī**, al-Ḥawādīṭ al-ḡāmi'a wa al-taḡārib al-nāfi'a fi al-mi'a al-sābi'a, bi-taḥqīq Maḥdī al-Naḡm, Dār al-kutub al-ilmīyya, Bayrūt, 2002, s. 243-244: Երկի հեղինակության վիճելիության մասին տե՛ս Rosenthal F., ibn al-Fuwaṭī // EI2, vol. 3, p. 769.

28 Տե՛ս **Ibn Kaṭīr**, al-Bidāya wa al-nihāya, ǧ. 17, bi-taḥqīq 'Abd Allāh ibn 'Abd al-Muḥsīn al-Turkī, Dār Haḡar, 1998, s. 395.

29 **Վարդան Վարդապետ**, Հաւարումն, էջ 151: Հմմտ. **Մանր Ժամանակագրություններ XIII-XVIII դդ.**, կազմեց Վ. Ա. Հակոբյան, հատ. 2, ՀՍՍՌ ԳԱ հրատ., Եր., 1956, էջ 143, 176: Տե՛ս նաև **'Abd Allāh Ḡasim 'Alī 'Al Tānī**, al-Ālqāt al-siyāsiyya bayna al-Muḡūl wa Mamlaka Armaniyya al-Şuḡrā 1236-1277m. wa aṭaruhā fi al-tārīḥ al-islāmī, Dār al-kutub al-arabiyya, Bayrūt, 2007, s. 155; Dashdondog, The Mongols, p. 137; **Mutaḡfian**, L'Arménie, p. 146.

արված «թաթարն երեկ այսար» գրառումը³⁰: Այդ ձեռագրի հիշատակարանում ասվում է. «...աւարտեցալ մատեանս... ի բռնակալութեան մեծի իշխանին Մանկու կոչեցելոյ և տիեզերակալին Հողայունին՝ եղբար նորա, ի թագաւորութեան աստուածասէր և բարեպաշտ արքային Հայոց Հեթոն, և ի ժամանակի յորում առաւ հռչակաւորն Հալպ, և ամենայն քաղաքք և անուրք նորա»³¹:

5. Մոնղոլական բանակը Հալեպում

Մոնղոլներն ու նրանց դաշնակցած ուժերը Հալեպը պաշարեցին հիշրայի 658 թ. սաֆար ամսի 2-ին (1260 թ. հունվարի 18): Ինչպես վերևում ենք նշել, Հալեպն ու Դամասկոսն այդ ժամանակ պատկանում էին Այյուբյան ալ-Նասիր Յուսուֆին: «Եւ եկեալ եհաս ի վերայ Հալպայ, և պատեաց զնա շուրջանակի,- գրում է Սմբատ Սպարապետը՝ շարունակելով,- յոեաց և առ թագաւորն Հեթոն զնալ առ ինքն, և նա վաղվաղակի եհաս առ խանն զօրօք իւրովք, և խանն ուրախութեամբ ընկալաւ զնա»³²:

Հուլիտուրի գլխավորած բանակները, ինչպես **իբն Վասիլն** է վկայում, գործի դնելով 20 քարանետ մեքենա և պաշարողական այլ տեխնիկա³³, Հալեպի գրավումն ավարտին հասցրին սաֆար ամսի 9-ին (հունվարի 26, օրը՝ կիրակի)³⁴: Նույն սաֆար ամսին մոնղոլները գրեթե առանց դիմադրության տիրացան նաև Դամասկոսին: Բանն այն է, որ Դամասկոսի Այյուբյան տեր ալ-Նասիր Յուսուֆը, մոնղոլների հաղթական առաջընթացի և Հալեպի առման լուրն առնելով, գերադասեց փախուստի դիմել՝ քաղաքը թողնելով բախտի քմահաճույքին³⁵: Արյունահեղությունից խուսափելու համար Դամասկոսի մեծամեծերը վճռեցին քաղաքն «անվտանգության երաշխիքով» (*amān*) հանձնել Հուլադուին: «...Իւրեանց կամաւ ետուն զքաղաքն և բանալի քաղաքին ՚ի ձեռս Հուլաու Ղանին», - կարդում ենք Գրիգոր Ակներցուն վերագրվող երկում³⁶: Այս իրադարձությամբ ավարտվեց վերջին Այյուբյան արքայի իշխանությունն Ասորիքում³⁷:

Ղալտի **ալ-Մաքին իբն ալ-Ամիրը** (մահ. 1273/1274 թ.) պատմում է, որ մոնղոլները սրի քաշեցին Հալեպի բնակչության մեծ մասին և «նույնիսկ ասում էին, որ Բաղդադում ու Պարսկաստանի և ոչ մի քաղաքում այդքան մարդ չէին կոտորել, որքան Հալեպում: Ճանապարհներն ու շուկաները դիակներով լցվեցին, և թաթարների զորքերը ստիպված էին իրենց ձիերով նրանց վրայով անցնել, քանզի չէր գտնվում մի ազատ տեղ, որտեղ դիակ չլիներ»³⁸: «Հալեպի միջնաբերդը դիմադրություն ցույց տվեց,- գրում է **ալ-Մակրիզին**, - և Հուլադուն այն պաշարման մեջ պահեց այնքան ժամանակ, մինչև որ գրավեց սաֆար ամսի 10-ին: Նա ավերածության մատնեց այն, քանդեց բոլոր պարիսպները, ինչպես նաև մզկիթներն ու

30 Տե՛ս Երուսաղեմ, ձեռագիր № 251, թերթ 15^թ, ինչպես նաև **Mutafian**, L'Arménie, p. 147.

31 Տե՛ս **Հայերն ձեռագրերի հիշատակարաններ** (հետայսու՝ ՀՁՀ), ԺԳ դար, կազմեց Ա. Ս. Մաթևոսյան, ՀՄՍՀ ԳԱ հրատ., Եր., 1984, էջ 301.

32 **Սմբատայ Սպարապետի** Տարեգիրք, աշխատասիրութեամբ Հ. Սերովբէ Ազըլեանի, Վենետիկ, 1956, էջ 235:

33 Տե՛ս **ibn Wāṣil**, Mufarrīg, ց. 6, ց. 197: Հմմտ. **ibn al-Ṭbrī**, Tārīḥ muḥtaṣar al-duwal, ց. 487, ինչպես նաև Chronography, pp. 435-436.

34 Տե՛ս **ibn Wāṣil**, Mufarrīg, ց. 6, ց. 197; **Abū al-Fidā'**, Kitāb al-Muḥtaṣar, ց. 3, ց. 200-201: Հմմտ. **al-Maqrīzī**, al-Sulūk, ց. 1.2, ց. 422: Տե՛ս նաև ներքևում:

35 Տե՛ս **Abū Šāma**, Tarāğim riğāl al-qarnayn al-sādis wa al-sābi' al-marūf bi-l-Zayl' alā al-Rawḍatayn, bi-taḥqīq **M. al-Kawṭarī**, Dār al-ğil, Bayrūt, 1974, ց. 203: Տե՛ս նաև **Humphreys R. S.**, From Saladin to the Mongols, p. 351; **Jackson P.**, The Crisis in the Holy Land in 1260 // The English Historical Review, vol. 95, № 376, 1980, p. 490.

36 Տե՛ս **Գրիգոր Ակներցի**, Պատմություն ազգին նետողաց, էջ 49, ինչպես նաև **Blake, Frye**, History of the Nation, p. 348.

37 **Ibn al-ʿAmīd**, Kitāb al-mağmū al-mubārak / Aḥbār al-ʿAyyūbiyyīn, Maktabat al-ṭaqāfa al-dīniyya, Būr Saʿīd (առանց տարբերվի), ց. 50.

38 Տե՛ս **Անդ**, ց. 49.

այգիները, և քաղաքն անայացավ»³⁹: Իսկ **իբն Քասիրի** բնորոշմամբ՝ Հուլաղուի հարձակումից հետո «Հալեայն ասես վերածվեց մի բորոտ ավանակի»⁴⁰:

Հալեայում մոնղոլական ներխուժմանն անձամբ ականատես եղած **Բար Հերբենուր** նույնպես ընդունում է, որ Հալեայի սպանդն ավելի սաստիկ էր, քան Բաղդադինը: Հակոբիկների մափրիանը պատմում է, որ չնայած ինքը գնացել է իր հնազանդությունը հայտնելու Հուլաղուին, քանտարկվել է Կալաաթ ալ-Նաջմում (Ջիսր Մանրիջ-Գ.Դ.): Ըստ նրա՝ քաղաքի ատրի բնակչությունը, առանց իր հովվապետի մնալով, նույնպես կոտորածի և գերեվարության է ենթարկվել: Բար Հերբենուր շարունակում է, որ ատրիների մի մասը կոտորածից փրկվել է շնորհիվ Թորոս անունով մի քահանայի, ով հայոց Կոստանդին կաթողիկոսի եղբայրն էր, և Գևորգ (Kūrāk) անունով մի վանականի, ովքեր գնացել են թաթարների մոտ և ազատելով ողջ մնացածներին՝ առաջնորդել ասորական եկեղեցի⁴¹:

Աղբյուրների հաղորդմամբ երկու քաղաքների գրավմանն իրենց մասնակցությունն են բերել նաև հայոց արքա Հեթումն ու Անտիոքի իշխան Բոհեմունդը: Վարդանը գրում է, որ «...ընդ մնա էր 'ի յամնուլն զամենայն աշխարհն Շամայ' և մեր պսակավորն Հեթում, ազատելով 'ի մահուանէ՛զ քրիստոնէայան յեկեղեցականս և զաշխարհականս, յամենայն տեղիս լինելով»⁴²:

Մակայն, ինչ վերաբերում է արաբագիր պատմիչներին, նրանցից ոմանք Հայոց արքային և Անտիոքի իշխանին հիշյալ քաղաքներում գործված զարհուրելի արարքներ են վերագրում: **Իբն ալ-Ամիրի** վկայությամբ՝ Հալեայում գերության ըջվեց 100 հազարից ավելի մարդ, որոնց մեծ մասին վաճառեցին «ֆրանկների երկրում և հայերի երկրում, և կամ տեղափոխեցին Միջերկրական ծովի կղզիներ»⁴³: **Բայբարս ալ-Մանսուրին** և **իբն ալ-Ֆուրաթը** նույնպես գրում են, որ գերիներին վաճառեցին ֆրանկներին և հայերին⁴⁴: Իսկ **Իզզ ալ-Դին իբն Շադդադը** վկայում է. «Երբ անիծյալ թաթարները 658 թ. սաֆար ամսի 11-ին գրավեցին Հալեայ քաղաքը, Սսի տերը մտավ [Հալեայի] մզկիթ և մեծ թվով մարդկանց սրի քաշեց: Նա հրկիզեց նրա առջևի պատը, և կրակը տարածվեց դեպի արևմուտք ու հարավ՝ դեպի al-Halāwīyya դպրոցը, ապա հրկիզվեց նաև կոտորվածառների շուկան⁴⁵: Երբ [Հալեայի կառավարիչ] Իմադ ալ-Դին ալ-Կազվիին Հուլաղուին հայտնեց, թե ինչեր են արել սսեցիները, մասնավորապես՝ մզկիթն այրելու և քրիստոնյաների եկեղեցիներին ձեռք չտալու մասին, վերջինս հրամայեց վերջ տալ դրան և մարել կրակը: Նա սպանել տվեց մի խումբ սսեցիների: Եվ չնայած կրակը մարել չհաջողվեց, Ալլահը տեղատարափ անձրև ուղարկեց և հանգրեց այն»⁴⁶:

39 Al-Maqrīzī, al-Sulūk, ց. 1.2, ց. 422.

40 Ibn Katīr, al-Bidāya, ց. 17, ց. 396.

41 Տե՛ս Bar Hebraeus, Chronography, p. 436: Հմմտ. նույնի՝ Tārīḥ muḥtaṣar al-duwal, ց. 487.

42 Վարդանս Վարդապետ, Հաւարումն, էջ 151: Ստեփաննոս Օրբէլեան, Պատմութիւն, հտ. Բ, էջ 148-149.

43 Տե՛ս ibn al-'Amīd, al-Mağmū al-mubārak, ց. 49: Հմմտ. al-Maqrīzī, Sulūk, ց. 1.2, ց. 422.

44 Տե՛ս Baybars al-Manṣūrī, Zubdat al-fikra fī tāriḥ al-hiğra, bi-taḥqīq Dunāld Rīṭšārdz, Bayrūt, 1998, ց. 48; ibn al-Furāt, Tārīḥ al-duwal wa al-mulūk / Ayyubids, Mamlukes, and Crusaders: Selections from the Tārīkh al-Duwal wa'l-Mulūk of ibn al-Furāt. Edited and translated by Lyons U., W. Heffer and Sons, Cambridge, 1971, p. 41.

45 Կանարը նույնպես մեջբերում է **իբն Շադդադին**, բայց տարօրինակ կերպով հենց այս տեղում կանգ է առնում՝ չթարգմանելով հաղորդման վերջին կարևոր մասը: Տե՛ս Canard M., Le Royaume d'Arménie-Cilicie et de Mamelouks jusq'au traité de 1285 // Revue des Etudes Armeniennes, 1967, p. 219-220, n. 10.

46 Տե՛ս 'Izz al-Dīn ibn Šaddād, al-Alāq al-ḥaṭīra fī zikr umarā' al-šām wa al-Ğazīra, ց. 1.1, bi-taḥqīq Yaḥyā Zakariyā Abbāra, Dimašq, 1991, ց. 116: ԺԵ դարի պատմիչ իբն ալ-Շիհնան (մահ. 1485թ.) նույնությամբ կրկնում է իբն Շադդադին: Հմմտ. ibn al-Šiḥna, al-Durr al-muntaḥab fī tāriḥ mamlakat Ḥalab, bi-taḥqīq Abd Allāh Muḥammad Darwīš, Dār al-kitāb al-ʿarabī, Dimašq, 1984, ց. 68-69.

6. Մոնղոլական բանակը Դամասկոսում

Մոնղոլական զորքերը Քիթբուղա զորավարի գլխավորությամբ Դամասկոս շարժվեցին 658 թ. ռաբի առաջին ամսի (1260 թ. մարտ) կեսերին, բայց քաղաքի միջնաբերդը, հակառակ վերոհիշյալ պայմանավորվածության, հրաժարվեց հնազանդվել մոնղոլներին: Բայց երբ գործի դրվեցին 20-ից ավելի բաբանները, միջնաբերդում պաշարվածները նույնպես ստիպված եղան անձամուտը լինել՝ ենթարկվելով անողորմ կոտորածի և թալանի⁴⁷: Հետաքրքիր է, որ «Գործք կիպրացվոց»-ի վկայությամբ՝ մոնղոլական զորքերի հրամանատար Քիթբուղային Դամասկոս են ուղեկցել Հայոց արքան և Անտիոքի իշխանը: Ըստ աղբյուրի՝ քրիստոնյա ղեկավարներն այստեղ նույնպես մզկիթներ են քանդել, դրանք ավտոճների են վերածել, գինի են ցողել և խոզի միս քսել պատերին, իսկ մեկն անգամ փորձել են եկեղեցու վերածել՝ պատճառաբանելով, որ այն ժամանակին հունական եկեղեցի է եղել, և որ մուսուլմաններն իրենք են այն մզկիթ դարձրել⁴⁸: Արդի հետազոտողները, ինչպես օրինակ, Ջեքսոնը և նրան հետևելով՝ նաև Ամիտայը, հակված չեն հավանք ընծայելու այս հաղորդմանը: Մասնավորապես ըստ Ամիտայի՝ հաղորդումը չպետք է բառացի հասկանալ: Հնարավոր է՝ մոնղոլ պաշտոնյաների (այդ թվում հենց՝ Հուլաղուի զորավար Քիթբուղայի, ով նեստորական էր) քրիստոնյաների նկատմամբ տածած համակրանքը պատճառ եղած լինի Հեթումի և Բոհեմունդի մասին հյուսված այսօրինակ պատմությունների⁴⁹:

«Գործք կիպրացվոց»-ի հաղորդմանը հակառակ՝ մուսուլման հեղինակների մոտ, ի տարբերություն Հալեպի ղեպքերի, հայոց արքային կամ Բոհեմունդին ուղղված անմիջական մեղադրանքներ չկան: Այնուամենայնիվ, նրանք նույնպես խոստում են քաղաքի գրավումից հետո քրիստոնյաների և մուսուլմանների միջև եղած բախումների մասին: Արաբ պատմագիրների վկայությամբ՝ Դամասկոսի գրավումից հետո քրիստոնյաները քաղաքի մոնղոլ վերակացու-կառավարիչների (šihna, nā'ib), մասնավորապես քրիստոնյա Իլ-Սիբանի (այլուր՝ Իլ-Շիրան, մեկ այլ տեղում՝ Իլբան) թողտվությամբ ճնշում էին մուսուլմաններին: Ոգևորվելով այն փաստից, որ վերջինս իրենց եկեղեցիներն է հաճախում, նրանք բարձրաձայն իրենց կրոնն էին գովաբանում և անվանարկում իսլամը, գինի էին խմում, այն ցողում մարդկանց և անգամ մզկիթների դռների վրա, հնչեցնում էին իրենց եկեղեցիների զանգերը և այլն: Երբ մուսուլմանները քրիստոնյաների գործած արարքների մասին բողոքել են Իլ-Սիբանին (այլուր՝ Քիթբուղային), նրանց ձեռով և նավաստացուներով դուրս են հանել միջնաբերդից: Սակայն, երբ մոնղոլները 1260 թ. սեպտեմբերին ստիպված են եղել թողնել Դամասկոսն ու հեռանալ, մուսուլմանները դաժան հաշվեհարդար են տեսել քաղաքի քրիստոնյաների հետ նրանց գործած արարքների համար՝ ձեռի ենթարկել, այրել նրանց տներն ու եկեղեցիները (մասնավորապես՝ Kanisat Maryam-ը, այն է՝ [Սբ.] Մարիամ եկեղեցին)⁵⁰:

Մոնղոլները մեկը մյուսի հետևից տիրացան Ասորիքի մյուս մեծ ու փոքր բնակավայրերին⁵¹: **Ռաշիդ ալ-Դինի** վկայությամբ, երբ մոնղոլները գրավեցին

47 **Abū Šāma**, Tarāğim, §. 204; ibn al-Amīd, al-Mağmū' al-mubārak, §. 52.

48 **Les gestes des Chiprois**, p. 161-162.

49 Տես **Amitai**, Mongols, p. 31: Հմմտ. **Jackson**, Crisis, p. 486. Արժանափոխաբան է, որ նեստորական քրիստոնյա էր նաև Հուլաղուի առաջին կին Դոկուզ (Տոկուզ, Տողուզ) Խաթունը, ում «կամօր և բարեխոսությամբ» Բաղդադի և Ասորիքի գրավման ժամանակ բազմաթիվ քրիստոնյաներ են փրկվել մահից: Տես **Վարդան Վարդապետ**, Հուսարումն, էջ 149-150: Հմմտ. **ibn al-Amīd**, al-Mağmū' al-mubārak, §. 54.

50 **Ibn al-Amīd**, al-Mağmū' al-mubārak, §. 53; **Abū Šāma**, Tarāğim, §. 208; ibn Wāsil, Mufarriğ, §. 6, §. 212; al-Yūnīnī, Zayl mirāt al-zamān, §. 1, Dā'irat al-Ma'ārif al-Uṭmāniyya, Ḥaydarābad, 1954, §. 362-363; al-Zahabī, Tārīḥ al-Islām wa wafayāt al-mašāhīr wa al-alām, §. 48, bi-taḥqīq Umar 'Abd al-Salām Tadmūrī, Dār al-kitāb al-arabī, Bayrūt, 1999, §. 59-60; **ibn Kaṭīr**, al-Bidāya, §. 17, §. 397-399; **Abū al-Fidā**, Kitāb al-Muḥtaṣar, §. 3, §. 204-205: Ուշագրավ է, որ ալ-Վասիտին Իլ-Սիբանին անվանում է Հուլաղուի սորաքրոջ որդի (ibn ḥālat Hūlākū): Տես **ibn al-Wāsiṭī**, Radd alā ahl al-zimma wa man tabī'ahum, bi-taḥqīq Turkī ibn Fahad Āl Sa'ūd, al-Riyāḍ, 2010, §. 73-74. Հմմտ. **Āl Tānī**, al-Alāqāt al-siyāsiyya, §. 174-175.

51 Արաբական մի քանի աղբյուրներ, ինչպես օրինակ՝ **իբն Վասիլը** և **իբն ալ-Ֆուրաթը**, հաղորդում են, որ մոնղոլական որոշ զորավարներ մինչև Երուսաղեմ են հասել: Տես ibn Wāsil, Mufarriğ, §. 6, §. 201, ibn al-Furāt, Tārīḥ al-duwal (Lyons), p. 78: Անգամ այս դեպքում

Հարին բերդամրոցը, նրա բոլոր բնակիչներին, անգամ կանանց և ծծկեր երեխաներին սրի քաշեցին. փրկվեց միայն հայազգի մի ոսկերիչ⁵²: **Բար Հերբետսը** նույնպես պատմում է Հարիմի արյունալի առման մասին, միայն թե գրում է, որ միակ փրկվածը մի հայ դարբին էր⁵³:

Սակայն մոնղոլ Մեծ Խան Մանգուի հանկարծահաս մահվան ու Կարակորումում նոր խանի գահակալման շուրջ ծագած վեճի լուրը ընդմիջեց մոնղոլական զորքերի հետագա առաջխաղացումը: Հուլաղուն, իր հետ վերցնելով մոնղոլական զորքերի մեծ մասը, հետ քաշվեց Իրան՝ Կարակորում մեկնելու մտադրությամբ⁵⁴: **Իբն ալ-Գավադարիի** վկայությամբ՝ իլ-խանը զորքերի մնացյալ մասն⁵⁵ ու նորանվաճ տարածքների պահպանությունը վստահեց Քիթբուդա անունով իր զորավարին՝ նրան նշանակելով Հալեպի փոխարքա (nā'ib), իսկ Դամասկոսում փոխարքա կարգեց Բայդար[ա] անունով մեկ այլ զորավարի⁵⁶:

7. Կիլիկյան Հայաստանը մոնղոլական ռազմարշավից հետո

Հուլաղուի անակնկալ նահանջը վտանգավոր իրավիճակ ստեղծեց Կիլիկյան Հայաստանի համար: Մոնղոլների հետ հաստատած դաշնակցությունը հնարավորություն տվեց հայոց արքային տարածքային ձեռքբերումներ ունենալ և տիրանալ այն հողերին, որոնք մի ժամանակ Փիլարոսու Վարաժնունուն և Գող Վասիլին էին պատկանել⁵⁷: Ըստ Հեթում արքայորդու «Ճաշոց»-ի (1286 թ.) հիշատակարանի՝ «...նա (Հեթումը-Գ.Գ.) ազնույթեամբն Աստուծոյ և ձեռնտուութեամբ Մուղալ գաւրուն էառ գնեծն Գերմանիկէ (Սարաշը- Գ.Գ.) և գՊեհեսնի, թափեաց և գնախնեաց իւրոց զաշխարհ՝ զյափշտակեալն յայլոց»⁵⁸: Այս նվաճումներով հայոց թագավորության սահմանները, փաստորեն, ընդարձակվեցին ընդհուպ Եփրատ գետը: Հայոց հայրապետական այթորը՝ Հռոմկլան, ըստ այդմ առաջին անգամ աշխարհագրորեն միացավ Կիլիկիո հայոց թագավորությանը⁵⁹:

Այն, որ Հուլաղուի ստորիքյան արշավանքի արդյունքում Հեթումը տիրացել է Բեհեսնիին, վկայում են նաև արաբագիր հեղինակները, միայն թե հանգամանքները

ծճարտությունից հեռու է Ակներցու այն հաղորդումը, թե Հուլաղուն «գնաց ՚ի վերայ Երուսաղէմ քաղաքին և էառ գնա. և ինքն մտա ՚ի սուրբ Յարութիւնն, և երկիր եպագ սրբոյ Գերեզմանիս. եւ թողեալ զգորթն ՚ի տեղն, և դարձա խաղաղութամբ յաշխահն արևելից»: Տես **Գրիգոր Ակներցի**, Պատմություն ազգին նետողաց, էջ 49; **Blake, Frye**, History of the Nation, p. 348: Հմմտ. **Սմբատ Սպարապետ**, Տարեգիրք, Վենետիկ, էջ 236:

52 **Rašid al-Dīn**, Ġāmi' al-Tawārīḥ, ց. 2, be-kūšeš-e Bahmān Karīmī, Eqbāl, Tehrān, 1960, ց. 719-720; ինչպես նաև **Рашид-ад-Дин**, Сборник летописей, том III, пер. с перс. А. К. Арндса, под ред. А. А. Ромаскевича, изд. АН СССР, Москва-Ленинград, 1946, с. 50.

53 **Bar Hebraeus**, Chronography, p. 436.

54 **Ibn al-'Amīd**, al-Mağmū' al-mubārak, ց. 51; **Ibn Duqmaq**, Nuzhat al-anām fi tāriḥ al-Islām (628 h./1230 m.-659 h./1261h.), bi-taḥqīq Samīr Ṭabbāra, al-Maktaba al-'Ašriyya, Ṣaydā-Bayrūt, 1999, ց. 260.

55 Աղբյուրները տարակարծիք են Քիթբուդայի տրամադրության տակ թողնված զորքի թվաքանակի վերաբերյալ: Տես **Amitai**, Mongols, p. 27.

56 Տես **ibn al-Dawādārī**, Kanz, ց. 8, bi-taḥqīq Ūlriḥ Hārmān, al-Qāhira, 1971, ց. 49; **al-Maqrīzī**, al-Sulūk, ց. 1.2, ց. 427: Հմմտ. **Amitai**, Mongols, p. 27, n. 10.

57 Տես **Cahen Cl.**, La Syrie du Nord à l'époque des Croisades et la principauté franque d'Antioche, Geuthner, Paris, 1940, p. 705; **Der-Nersessian S.**, The Kingdom of Cilician Armenia // A History of the Crusades, vol. II: The Later Crusades 1189-1311, gen. ed. **K. M. Setton**, The University of Wisconsin Press, 1969, p. 653; **Canard**, Le Royaume, p. 222; Āl Ṭānī, al-'Alāqāt al-siyāsiyya, ց. 167.

58 Տես Մաշտոցի անվան Մատենադարան, **ձեռ. № 979** («Ճաշոց»), թերթ 475ա, ինչպես նաև **ՀԶԸ**, ԺԳ դար, էջ 587: Հմմտ. **Սամուէլի քահանայի Անեցոյ** Հաւարմունք ի գրոց պատմագրաց, յառաջ. և ծանօթ. Արշակ Տէր-Սիբեղեանի, Վաղարշապատ, Ա. Էջմիածնի տպարան, 1892, էջ 221; **Hayton**, La flor, p. 171: Հմմտ. **Վահրամայ Բարսեղոյ** Ռոսնատր պատմություն Ռուբենեանց, ի լոյս ընծայեաց հանդերձ ծանօթութեամբք Կարապետ Վարդապետ Շահնազարեանց, Փարիզ, 1859, էջ 220: Տես նաև **Grousset R.**, The Empire of the Steppes, tr. from French by Naomi Walford, Rutgers University Press, New Brunswick, New Jersey, 1970, p. 362; **Cahen**, La Syrie, p. 705; **Микаелян Г. Г.**, История Киликийского Армянского государства, изд. АН АССР, Ереван, 1952, с. 333; **Mutafian**, L'Arménie, p. 149; **Stewart**, Armenian Kingdom, pp. 46-47, n. 10.

59 **Raphael K.**, Muslim Fortresses in the Levant: Between Crusaders and Mongols, Routledge, London & New York, 2011, p. 186.

դույզն-ինչ այլ կերպ են ներկայացնում: Նրանցից **ալ-Ջազարին** (մահ. 1338 թ.) հիջրայի 692 թ. (1293 թ.) իրադարձությունների շարադրանքում, երբ խոսում է Սսի երկրի հետ կնքված հաշտության արդյունքում մամլուքներին հանձնված բերդերի (Բահասնա կամ Բեհեսնի, Մարաշ, Թել Համդուն) մասին, գրում է. «Բահասնան] Հալեպի տեր ալ-Մալիք ալ-Նասիր Սալահ ալ-Դին Յուսուֆի ժամանակներում, որպես իր երկրի տիրույթներից մեկը, գտնվում էր նրա կառավարիչների ձեռքում: Երբ թաթարները Հալեպ եկան և տիրացան նրան, այնտեղի (Բահասնայի) կառավարիչն էր էմիր Սայֆ ալ-Դին ալ-Ակրաբը, ով վաճառեց այն Սսի տիրոջը հարյուր հազար դիրհամի դիմաց: Վերջինս նրան տվեց վաթսուս հազար դիրհամ և վերցրեց բերդը, որ ցայժմ նրանց ձեռքին էր և մեծ տառապանք էր պատճառում մուսուլմաններին»⁶⁰: Այս պատմությունը վերապատմում է նաև **ալ-Ջահարին** (մահ. 1348 թ.), միայն թե գրում է, որ բերդը 100 հզ. դիրհամով «Սսի տիրոջ» համար գնել է Հուլադուն, որից հետո Հեթումն իր հնազանդությունն է հայտնել նրան⁶¹:

Բերդին տիրելու փաստին անդրադառնալով՝ մյուս պատմիչներից տարբերվող մեկ այլ պատմություն է հաղորդում **ալ-Այնին** (մահ. 1453 թ.): Նա մասնավորապես գրում է. «Այն [նախկինում] Հալեպի տարածքների մաս էր, պատկանում էր մուսուլմաններին, և նրա վրա իշխողը Հալեպի տեր ալ-Մալիք ալ-Նասիրն էր: Այդպես էր, քանի դեռ Հուլավուն չէր մտել Հալեպ և գրավել բոլոր երկրները: Երբ թաթարները՝ Սսի տերը, իմացավ, որ Հուլավուն այն [նույնպես] գրավել է, նրա մոտ գնաց և նվերներով շողոքորթեց, գումար տարավ նրան՝ խնդրելով, որ Բահասնան իրենը լինի, և նա էլ հանձնեց նրան»⁶²:

Այնուամենայնիվ, **Հուլադուի նահանջից հետո հայ-մոնղոլական դաշնակցությունը մեկընդմիջտ սեպ դարձավ հայ-մամլուքյան հարաբերություններում և վերահաս սպառնալիք հայոց թագավորության համար**: Մամլուք պատմիչ **իբն Քասիրը** գրում է. «Եվ որովհետև նրանք (հայերը- Գ.Գ.) ամենավնասակարն էին մուսուլմանների համար մոնղոլների ժամանակներում: Երբ նրանք գրավել էին Հալեպն ու այլ քաղաքներ, մեծաթիվ ու մեծաքանակ մուսուլման կանանց և երեխաների էին գերեվարել, իսկ դրանից հետո էլ Հուլադուի (Hülākū) օրոք [պարբերաբար] ասպատակում էին մուսուլմանների երկրները»⁶³: **Ալ-Ումարին**, թեև այս դեպքերից 70-80 տարի անց է գրում, այնուամենայնիվ հայ-մոնղոլական դաշնակցության պատճառով հայերին հայտարարում է. «Իսլամի ամենավտանգավոր թշնամիներ» (ahḅaṭ 'udwīn li al-Islām)⁶⁴, որոնց վրա «Հուլադույան տան (հարստության) արքաները մեծ ուժ և ազդեցություն ունեին, մինչև որ նվաղեց նրանց ուժը, թուլացավ դաժանությունը, նրանց (հայերի) անտառը դատարկվեց նրանց առյուծներից»⁶⁵:

Չսայած լուրջ ռազմական նախաձեռնություններ չձեռնարկելու Հուլադուի հորդորներին, Քիթբուդան շուտով որոշեց շարունակել արշավանքը դեպի Եգիպտոս: Մի քառ Սպարապետն այդ մասին գրում է. «Իսկ բիրապետն Քիթբուդան ոչ եկաց ի պատուէր խանին ուր եղ գնա կեալ ի տեղի իւր, այլ ժողովեաց զօրս, և յերկրէն կլիկեցուց արս եճ (500) յղեալ էառ ի թագաւորէն, և դէն եղեալ գնայր

60 Stū **al-Gazari**, Ḥawādīṭ al-Zamān wa anbā'uhu wa wafayāt al-akābī wa al-ayān min abnā'ihī, ց. 1, bi-tahqīq 'Umar 'Abd al-Salām Tadmūrī, al-Maktaba al-aṣriyya, Bayrūt, 1998, ք. 149-150: Հմնւմ. **al-Zahabī**, al-Muḥtār min tāriḥ ibn al-Gazari, bi-tahqīq Ḥaḍīr Abbās Muḥammad Ḥalīfat al-Munṣadāwī, Dār al-Kitāb al-Arabī, Bayrūt, 1988, ք. 358: **Mufaddal ibn Abī al-Fadā'il**, al-Nahḡ al-sadīd wa durr al-farīd fīmā ba da tāriḥ ibn al-Amīd (Moufazzal ibn Abil-Faza'il, Histoire des sultans mamlouks, Texte Arabe publié et traduit en Français par E. Blochet // Patrologia Orientalis, tome 14, Paris, 1919), ք. 558 [394]; **al-Nuwayrī**, Nihāyat al-arab fī funūn al-adab, ց. 31, Dār al-Kutub al-Islamiyya, Bayrūt, 2004, ք. 157; **ibn al-Dawādārī**, Kanz, ց. 8, ք. 341; **ibn al-Furāt**, Tāriḥ al-duwal, ց. 8, bi-tahqīq Qusṭanṭīn Zurayq wa Naḡlā 'Izz al-Dīn, al-Maṭba'a al-Amīrkāniyya, Bayrūt, 1939, ք. 155-156.

61 Stū **al-Zahabī**, Tāriḥ al-Islām, ց. 52, ք. 22, ինչպես 'uսու 'unյնի' Duwal al-Islām, ց. 2, bi-tahqīq Ḥasan Ismā'īl Marwa, Dār Ṣādir, Bayrūt, 1999, ք. 218: Հմնւմ. **ibn Taḡrī Birdī**, al-Manhal al-ṣāfi wa al-mustawfi ba da al-Wāfi, ց. 5, bi-tahqīq Nabil Muḥammad 'Abd al-Azīz, al-Hay'a al-Miṣriyya al-amma li-l-Kitāb, al-Qāhira, 1988, ք. 275.

62 **Al-'Ayni**, 'Iqd al-ḡumān fī tāriḥ ahl al-zamān, ց. 3, bi-tahqīq Muḥammad Muḥammad Amīn, al-Hay'a al-Miṣriyya al-amma li-l-kitāb, al-Qāhira, 1990, ք. 151-152.

63 **Ibn Katīr**, al-Bidāya, ց. 17, ք. 466.

64 **Al-'Umārī**, Kitāb al-Ta'rīf, ք. 55.

65 Նույն տեղում:

մտանել յեգիպտոս»⁶⁶: Սակայն մոնղոլական բանակի հիմնական մասի նահանջը Կուտուզին հնարավորություն տվեց մամլուքներին դուրս բերել անակնկալության այն թմբիրից, որ մինչ այդ անպարտելի համարվող մոնղոլների հաղթարշավն էր հարուցել, և շրջադարձ մտցնել իրադարձությունների հետագա ընթացքում: Նախահրձակ լինելով՝ Կուտուզը 658 թ. ռասնդան ամսի 25-ին (1260 թ. սեպտեմբերի 3) Այն Ջալուտի մոտ ջախջախիչ պարտության մատնեց մոնղոլներին⁶⁷: Ինքը՝ մոնղոլ զորապետ Քիթբուդան, սպանվեց մարտում, իսկ նրա կինն ու որդիները, ինչպես Սմբատ Սպարապետն է շարունակում, գերի տարվեցին Եգիպտոս⁶⁸: Եթե հաշվի առնենք Սմբատի վկայությունը Այն Ջալուտի ճակատամարտին Հեթումի ուղարկած 500 ռազմիկների մասնակցության մասին⁶⁹, ապա կարող ենք ընդունել, որ այն նաև հայ-մամլուքյան առաջին անմիջական բախումն էր⁷⁰, որ հետագա տարիներին պիտի վերաձեր լուրջ դիմակայության ու հակամարտության:

Չսայած տպավորիչ հաջողությանը՝ Կուտուզը նույնպես չհասցրեց վայելել իր տարած հաղթանակի պատուները, քանզի Բայբարսի և նրա համախոհների դավադրության գոհ դարձավ: Վերջինս սուլթանության գահին բազմեց ալ-Մալիք ալ-Ջահիր (կառ. 1260-1277 թթ.) անունով⁷¹:

Հենց Բայբարսին էր վիճակված մամլուքյան դրոշի տակ համախմբելու Եգիպտոսն ու Ասորիքը, հաջողությամբ դիմագրավելու Իլ-խանությունից և նրա ճամբարում գտնվող այլ ուժերից՝ մասնավորապես Կիլիկյան Հայաստանից եկող սպառնալիքներին և սկսելու Ասորիքն ու Պաղեստինը խաչակրաց կազմավորումներից վերջնականապես մաքրելու գործը, որ նրանից հետո պիտի եզրափակելին ալ-Մանսուր Կալվաուն (1279-1290 թթ.) և ալ-Աշրաֆ Իսաիլ (1290-1293 թթ.) սուլթանները: Այլ կերպ ասած՝ Մամլուքյան սուլթանության հռչակումից մեկ տասնամյակ անց միայն՝ հենց Բայբարսի կառավարման օրոք, մշակվեց այդ պետության արտաքին-քաղաքական հայեցակարգը, և դրվեցին նրա կայացման աշխարհայացքային հիմքերը:

Բայբարսի գահակալման սկզբից մինչև Կիլիկյան Հայաստանի մայրամուտն ու կործանումը, Մամլուքյան սուլթանության հետ հարաբերությունների հարցը մեկընդմիջտ ամրագրվեց Հայոց թագավորության արտաքին քաղաքականության օրակարգում:

Գագիկ Գ. Դանիելյան – գիտական հետաքրքրությունները՝ Կիլիկյան Հայաստանի պատմություն, հայ-մամլուքյան և հայ-մոնղոլական հարաբերություններ, հայոց պատմության ԺԳ-ԺԵ դարերի արաբալեզու և պարսկալեզու սկզբնաղբյուրներ:

66 **Սմբատ Սպարապետ**, Տարեգիրք, Վենետիկ, էջ 236:
 67 Ճակատամարտի մասին մանրամասն տե՛ս **Fäyid Hammād Muḥammad ʿĀšūr**, al-Ġihād al-Islāmī dīdda al-ṣalibiyyīn wa al-muġūl fī ʿAṣr al-mamlūkī, Ṭarābulus, 1995, թ. 111-127; **Saʿīd ʿĀšūr**, al-ʿAṣr al-Mamālīkī, թ. 32-36; **Smith J. M.**, ʿAyn Jālūt: Mamlūk Success or Mongol Failure? // Harvard Journal of Asiatic Studies, vol. 44, № 2, 1984, pp. 307-345; **Amītai**, Mongols, pp. 39-48; **Šawkat Ramaḍān Huġġa**, al-ʿĀlāqāt bayna dawlat al-mamālīk al-ūlā wa dawlat ilḥāniyya fāris fī aḥd al-sultān al-Zāhir Baybars, 648-736 h. /1250-1335 m., ʿAmān, 2011, թ. 104-117.
 68 **Սմբատ Սպարապետ**, Տարեգիրք, Վենետիկ, էջ 236: Հմմտ. **ibn al-ʿAmīd**, al-Maġmū al-mubāarak, թ. 53.
 69 Կիրակոս Գանձակեցին նույնպես գրում է, թե «[Քիթբուդա] ել պատերազմաւ ընդդէմ Սուլտանին, և քաջապէս մարտոցեալ՝ կոտորեցաւ ամենայն զօրոքն, որ ընդ իւր. զի յոյժ բազումք էին Եգիպտացիքն, և կոռեցան ՚ի դաշտն Թաբորական լերինն: Կային ընդ Քիթբուդային ՚ի պատերազմի անդ յոյվք ՚ի Հայոց և ՚ի Վրաց, որք ընդ նմա կոտորեցան» (ընդգծումը մերն է-Գ.Դ): Տե՛ս **Կիրակոս Գանձակեցի**, Պատմութիւն, էջ 234: Իսկ ըստ Վարդանի՝ Այն Ջալուտում ջարդված մոնղոլական զորքերի մնացուկները ապաստան են գտել Կիլիկիայում, որոնց Հեթումը օթևան, նժույգներ և ռոճիկ է տվել՝ պատվով ձանապարհելով «առ տէրն իւրեանց»: Տե՛ս **Վարդան Վարդապետ**, Հաւաքումն, էջ 152:
 70 Ինչ վերաբերում է մամլուքյան պատմիչներին, ապա նրանք ոչինչ չեն հաղորդում Այն Ջալուտի ճակատամարտին հայերի մասնակցության մասին: Նրանցից **իբն Թադրի Բիրդին** (մահ. 1470թ.) միայն գրում է, թե «Քիթբուդա-նոյինը հավաքեց բոլոր նրանց, ովքեր Ասորիքում էին՝ թաթարներին և **այլոց**»: Տե՛ս **ibn Taġrī Birdī**, al-Nuġūm al-zāhira fī mulūk Miṣr wa al-Qāhira, ց. 7, bi-taḥqīq Muḥammad Ḥusayn Šams al-Dīn, Dār al-kutub al-ilmīyya, Bayrūt, 1992, թ. 73.
 71 **ibn al-ʿAmīd**, al-Maġmū al-mubāarak, թ. 54-55.

Summary

ORIGINS OF THE CONFLICT BETWEEN MAMLUK SULTANATE AND CILICIAN ARMENIA

Gagik G. Danielyan

Key words– Mamluk Sultanate, Mongols, Il-khanate, Armenian Kingdom of Cilicia, Ketbugha, Hetum I, Bohemond VI, Qutuz, Baybars, Armenian-Mamluk relations.

In the middle of the XIII century important events occurred in Egypt that changed drastically the political situation not only in Egypt, but in the Middle East as a whole. In 1250, as a result of the overthrow of the Ayyūbid dynasty, the Mamlūks seized the power in Cairo and established the Mamlūk Sultanate (1250-1517). A few years later, another great political power came into existence in the region - the Mongol Il-khanate of Persia (1256-1335). The Cilician Armenian Kingdom, which had already submitted to Mongol suzerainty, was also involved into a constant struggle between the two states. In 1260 king Het'um took an active part in the Mongol invasion of Syria led by Hulegu. However, after the Mongol defeat at 'Ayn Ğālūt, the Mongol-Armenian alliance became the main reason for strained relations between Cilician Armenia and the Mamlūk Sultanate, that soon developed into a direct military confrontation.

Резюме

ИСТОКИ КОНФЛИКТА МАМЛЮКСКОГО СУЛТАНАТА И КИЛИКИЙСКОЙ АРМЕНИИ

Гагик Г. Даниелян

Ключевые слова – Мамлюкский султанат, монголы, государство Хулагуидов, Киликийское армянское царство, Китбуга, Хетум I, Боэмунд VI, Кутуз, Бейбарс, армяно-мамлюкские отношения.

В середине XIII века в Египте произошли события, которые в корне изменили политическую ситуацию не только в Египте, но и на Ближнем Востоке в целом. В 1250 г. в результате свержения династии Айюбидов, власть в Каире захватили Мамлюки (1250-1517). Несколько лет спустя (1256 г.) на историческую арену региона вышла еще одна мощная политическая сила - государство Хулагуидов (1256-1335). Принявшая свою вассальную зависимость от монголов Киликийская Армения оказалась в центре столкновения и продолжительной борьбы этих двух держав. В 1260 году армянский царь Хетум принял активное участие в Сирийской компании Хулагу. Но после поражения монголов при Айн-Джалуте, союз с монголами стал основной причиной обострения отношений между Киликийской Арменией и Мамлюкским султанатом, которые вскоре переросли в открытое противоборство.